



**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ
ԲԵՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակն (այսուհետ՝ Կազմակերպություն) իր գործունեության ընթացքում տարիներ շարունակ զբաղվում է գորակոչիկների, զինճառայողների առողջության իրավունքի պաշտպանությամբ¹: Առանձին ուշադրություն է դարձվել զինվորական ծառայության ընթացքում զինճառայողների առողջական խնդիրների առաջացման պատճառներին, այդ թվում՝ հենց առողջական խնդիրների հետևանքով վաղաժամ գորացրվածների իրավունքների պաշտպանությանը: Վերջին խմբի անձանց թվին են պատկանում ինչպես մարտական գործողություններին (այդ թվում՝ 44-օրյա պատերազմին) մասնակցելու ընթացքում վիրավորում կամ վնասվածք ստացած, այնպես էլ ոչ մարտական պայմաններում առողջական խնդիրներ ձեռք բերած, այդ հիմքով զինվորական ծառայությունից վաղաժամ գորացրված և հաշմանդամություն ունեցող անձինք: Կազմակերպություն դիմած նշված խմբի քաղաքացիների գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ պետությունը պատշաճ չի կատարում իր պարտավորությունները ոչ միայն զինճառայողների առողջության իրավունքի պաշտպանության, այլ նաև նշված անձանց սոցիալական ապահովության իրավունքի ոլորտներում: Ներկայացվող տեղեկանքում անդրադառնում ենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վարքագծին՝ առողջական խնդիրների հիմքով զինվորական ծառայությունից վաղաժամ գորացրված անձանց բժշկասոցիալական փորձաքննության (այսուհետ նաև՝ ԲՄՓ) և վերափորձաքննության ժամանակ, պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում:

1. Անձի նկատմամբ հաշմանդամության խումբ սահմանելու, բժշկասոցիալական փորձաքննության և վերափորձաքննության հետ կապված հարաբերությունները ներպետական օրենսդրությամբ կարգավորվում են ՀՀ կառավարության «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» 2 մարտի 2006 թվականի N 276-Ն և «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները

¹ Տես օրինակ՝ <https://archive.hcav.am/publications/%d5%a2%d5%aa%d5%b7%d5%af%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%ae%d5%a1%d5%bc%d5%a1%d5%b5%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%b0%d5%a5%d5%bf-%d5%af%d5%a1%d5%ba%d5%be%d5%a1%d5%ae-%d5%a6%d5%b8%d6%80%d5%a1/>, <https://hcav.am/hcav-am-26-01-2023/>, <https://hcav.am/n-s-22-12-2022/>



հաստատելու մասին» «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» 13 հունիսի 2003 թվականի N 780-Ն որոշումներով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) և իրավական այլ ակտերով: Գործող իրավակարգավորումների համաձայն՝ անձի նկատմամբ հաշմանդամության խումբ է սահմանվում, եթե առկա է հիվանդություն կամ վնասվածք, նշվածով պայմանավորված օրգանիզմի ֆունկցիաների կայուն արտահայտված (չափավոր, արտահայտված և խիստ արտահայտված) խանգարումներ, որոնք հանգեցնում են կենսագործունեության սահմանափակմանը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հաշմանդամության սահմանման հետ կապված հարաբերությունները ենթաօրենսդրական վերը նշված ակտերի փոխարեն 2023 թվականի փետրվարի 1-ից կարգավորվելու են 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և նույն թվականի սեպտեմբերի 9-ին ուժի մեջ մտած «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքով՝ հարկ չենք համարում անդրադառնալ բժշկասոցիալական փորձաքննության գործող չափորոշիչներին և դրանց արդյունավետությանը, հատկապես, որ դրանք փոխարինվելու են հաշմանդամության գնահատման նոր չափորոշիչներով, իսկ իրավակիրառ պրակտիկայում վերջիններս դեռևս կիրառություն չեն ստացել:

Նշվածը հիմք ընդունելով՝ ներկայացվող տեղեկանքում անդրադառնում ենք զինվորական ծառայությունից վաղաժամ զորացրված և հաշմանդամություն ունեցող անձանց հաշմանդամությունը գնահատելու և դրա հիման վրա սոցիալական ապահովության գործընթացում Ծառայության կողմից իրականացվող վարչարարության իրավաչափությանը:

Ներկայումս Կազմակերպության կողմից տրամադրվող անվճար իրավաբանական աջակցության շրջանակներում զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած և զինվորական ծառայությունից վաղաժամ զորացրված 8 նախկին զինծառայողներ (որոնցից 5-ը 44-օրյա պատերազմին մասնակցած և վնասվածք կամ վիրավորում ստացած անձինք են) հայցադիմումներ են ներկայացրել ՀՀ վարչական դատարան (այսուհետ՝ Վարչական դատարան) ընդդեմ Ծառայության՝ հաշմանդամության խումբ տրամադրելու կամ հաշմանդամության խումբը վերականգնելու պահանջներով: Բոլոր գործերով հայցադիմումները դատարան են ներկայացվել 2022 թվականին: Նշված գործերից 1-ով Վարչական դատարանը կայացրել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, հայցվորի ներկայացրած հայցը բավարարվել է՝ դատարանը պարտավորեցրել է Ծառայությանն ընդունել որոշում՝ հայցվորին



հաշմանդամության 3-րդ խումբ տրամադրելու մասին², իսկ մյուս 7 գործերը գտնվում են նախնական կամ դատաքննության փուլերում: Եվս 1 գործով հայցվորը Կազմակերպության աջակցությամբ դիմել է Վարչական դատարան՝ Ծառայությունից պահանջելով փոխհատուցել ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված նյութական և ոչ նյութական վնասը, որն առաջացել է Ծառայության ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում, երբ վերափորձաքննության ժամանակ մերժվել է նախկին զինծառայողին հաշմանդամության խումբ տրամադրելը: Ուսումնասիրելով նշված գործերը մեկ ամբողջության մեջ՝ Կազմակերպությունը Ծառայության կողմից իրականացվող վարչարարության գործընթացքում արձանագրել է համակարգային խնդիրներ, որոնք ներկայացվում են ստորև:

1.1 Զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց ԲՄՓ գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի՝ առաջնակի փորձաքննություն, երբ նշված անձինք Ծառայության կողմից փորձաքննվում են առաջին անգամ, և վերափորձաքննություն, երբ Ծառայության կողմից ԲՄՓ-ն իրականացվում է հաշմանդամության խումբ սահմանելու ժամկետը (որպես կանոն՝ մեկ տարի) լրանալուց հետո: Կազմակերպության կողմից վարվող գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջանակի փորձաքննությունն ուղեկցվում է անձի իրավունքների և ազատությունների էական խախտումներով, մասնավորապես՝ Ծառայությունը և վերջինիս կազմում գործող ԲՄՓ հանձնաժողովները չեն տիրապետում և չեն առաջնորդվում վարչարարության հիմնարար սկզբունքներով, դրանցով իրենց՝ վարչական մարմինների վրա դրված պարտականություններով, պետության ստանձնած միջազգային պարտավորություններով, ինչը հանգեցնում է նրան, որ անձի բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ չի իրականացվում փորձաքննվող անձի օբյեկտիվ հետազոտություն, վարչական վարույթում առկա ապացույցների՝ բժշկական փաստաթղթերի մանրամասն ուսումնասիրություն, յուրաքանչյուր գործով չի իրականացվում բազմակողմանի և լրիվ քննություն, հաշվի չեն առնվում փորձաքննվող անձի կողմից ներկայացված փաստարկները՝ կենսագործունեության սահմանափակման վերաբերյալ և ԲՄՓ հանձնաժողովները անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկում պարզելու համար, թե առկա առողջական խնդիրներն ի՞նչ հետևանքներ են առաջացրել անձի կյանքում. հաշմանդամության խումբ սահմանելը մերժելու մասին որոշումը որևէ հիմնավորում չի պարունակում հիվանդությամբ կամ վնասվածքով պայմանավորված

² Վճիռը դեռևս օրինական ուժի մեջ չի մտել:



օրգանիզմի ֆունկցիաների խանգարման, կենսագործունեության որևէ տեսակի, որևէ աստիճանի սահմանափակումների չլինելու վերաբերյալ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով (...), իսկ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը սահմանում է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: (...):

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել և օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար իրականացմանը՝ առանց հաշմանդամության պատճառով որևէ խտրականության: Այս նպատակով մասնակից պետությունները պարտավորվում են.

ա. ձեռնարկել համապատասխան օրենսդրական, վարչական և այլ միջոցներ սույն Կոնվենցիայով սահմանված իրավունքների իրականացման համար. (...):

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ սույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուր մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը: (...):

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 11-րդ հոդվածի համաձայն՝ առողջության պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են, ուղղակիորեն կամ պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցելով, ձեռնարկել համապատասխան միջոցներ, որոնք, inter alia, ուղղված կլինեն՝

1. հնարավորին չափ վերացնելու վատառողջության պատճառները,
2. ապահովելու խորհրդատվական և կրթական հնարավորություններ՝ առողջությանը նպաստելու և առողջության հարցերում անհատի պատասխանատվությունը խրախուսելու նպատակով,
3. հնարավորին չափ կանխելու համաճարակային, տեղական (էնդեմիկ) և այլ հիվանդությունները, ինչպես նաև դժբախտ պատահարները:



Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7» 2007 թվականի հունիսի 20-ի առաջարկության 2-րդ հոդվածով սահմանվում է «Օրինականություն և համապատասխանություն օրենքով նախատեսված նպատակին» սկզբունքը, որի համաձայն՝ պետական մարմինները պետք է գործեն օրենքին համապատասխան և իրենց լիազորությունները սահմանող կանոնների շրջանակներում: Նրանք չպետք է գործեն կամայականորեն: Նշված սկզբունքով սահմանվում է, որ պետական մարմինների կողմից կայացվող որոշումների բովանդակությունը և դրանց կայացման եղանակը պետք է հիմնված լինեն օրենքի վրա: Պետական մարմինների կամայական գործողությունները կանխելու նպատակով վերջիններս պետք է գործեն օբյեկտիվորեն և անաչառորեն³: Օրինականության սկզբունքը վարչարարության հիմնարար սկզբունքն է: Եթե վարչական մարմինն իր գործունեությունն իրականացնելիս չի առաջնորդվում օրենքով (իրավաչափ վարչարարություն), ապա վարչարարության մյուս սկզբունքների պահպանումն այլևս առարկայազուրկ է: Վարչարարության օրինականության սկզբունքը նշանակում է, որ վարչական մարմինը չի կարող գործել ազատ և անկաշկանդ, ընդհակառակը, վարչական մարմինը կաշկանդված է իրավունքով և օրենքով և պարտավոր է գործել օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում և կատարել օրենքով իր վրա դրված պարտականությունները: Ներպետական օրենսդրությամբ օրինականության սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, ինչպես նաև Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը: **Գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ ԲՄՓ իրականացնող հանձնաժողովների կողմից ամենից շատ խախտվում է օրինականության սկզբունքը, ինչի մասին փաստում են Վարչական դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը⁴:**

Վարչարարության հաջորդ սկզբունքը, որն անքակտելիորեն կապված է քննարկվող հարցի հետ, համաչափության սկզբունքն է: Համաձայն Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7» 2007 թվականի հունիսի 20-ի առաջարկության 5-րդ հոդվածի՝ պետական մարմնի կողմից

³ <https://rm.coe.int/administration-and-you-arm/1680a169c6>, էջ 12

⁴ Տես օրինակ թիվ ՎԴ2/0246/05/18, ՎԴ6/0072/05/18 վարչական գործերը:



իր լիազորությունների կատարման ընթացքում ձեռնարկված միջոցառումները չպետք է լինեն չափազանց խիստ՝ անհատների իրավունքների և շահերի վրա դրանց ազդեցության առումով, և պետք է շարունակվեն միայն այնքան, որքան անհրաժեշտ է և այն չափով, որքան անհրաժեշտ է ցանկալի նպատակին հասնելու համար: Համաձայն հողվածի մեկնաբանության՝ համաչափության սկզբունքը կխախտվի, եթե չպահպանվեն հետևյալ պահանջները.

i. Պետք է ողջամիտ հարաբերակցություն լինի պետական մարմնի կողմից հետապնդվող նպատակների և դրանց հասնելու համար ընտրված միջոցների միջև: Անհատի իրավունքների ցանկացած սահմանափակում կամ միջամտություն այդ իրավունքներին պետք է լինի պատշաճ և խիստ անհրաժեշտ, իսկ նպատակները չեն կարող իրականացվել այլ միջոցներով: Չափազանց խիստ միջոցներ կիրառելու արգելքը պետական մարմիններին պարտավորեցնում է օգտագործել միայն այն միջոցները, որոնք անհրաժեշտ են ցանկալի արդյունքի հասնելու համար:

ii. Պետք է ողջամիտ հարաբերակցություն լինի անհատի նկատմամբ կիրառված սահմանափակումների և պաշտպանության ենթակա հանրային շահի միջև: Անհատի նկատմամբ կիրառված այս սահմանափակումը պետք է ողջամտորեն առնչվի այն օգուտին, որից հանրությունն օգտվում է⁵:

Վարչարարության համաչափության սկզբունքն իրավական պետության կարևոր սկզբունքներից մեկն է: Քննարկվող խնդրի համատեքստում համաչափության սկզբունքի կարևորությունն այն է, որ դրա միջոցով հնարավորություն է ստեղծվում գնահատելու Ծառայության կողմից նախկին զինծառայողին հաշմանդամ չճանաչելու մասին որոշման իրավաչափությունը: Որպեսզի գնահատենք, թե Ծառայության կողմից հիշատակված սկզբունքն արդյո՞ք պահպանվում է ԲՄՓ իրականացնելիս, բավական է ուսումնասիրել դատական այն գործերը, որոնցով Ծառայության կողմից փորձաքննված անձին՝ հաշմանդամ չճանաչելու մասին որոշումը Վարչական դատարանը ճանաչել է անվավեր՝ պարտավորեցնելով Ծառայությանն ընդունել անձի նկատմամբ հաշմանդամության խումբ սահմանելու մասին որոշում: Վարչարարության համաչափության սկզբունքն ամրագրված է նաև Օրենքի 8-րդ հոդվածով, որի համաձայն՝ վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով

⁵ <https://rm.coe.int/administration-and-you-arm/1680a169c6>, էջ 19



հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Ծառայության կողմից իրականացվող վարչարարության համատեքստում տեղին է խոսել վարչարարության ևս երկու հիմնարար սկզբունքների մասին: Խոսքն իրավական որոշակիության և լաված լինելու սկզբունքների մասին է: Առաջինի դեպքում հարցը ոչ այնքան ուրբտը կարգավորող իրավական ակտերի ու դրանցում արտացոլված նորմերի, որքան Ծառայության կողմից ընդունված որոշումների (հաշմանդամության խումբ չսահմանելու) մասին է:

Մասնավորապես, Կազմակերպություն դիմող քաղաքացիները հայտնում են, որ իրենց չի ներկայացվում և իրենց համար պարզ չէ, թե առկա առողջական խնդիրների և դրանց հետևանքով ի հայտ եկած օրգանիզմի ֆունկցիաների և կենսագործունեության սահմանափակումների պայմաններում ԲՄՓ հանձնաժողովներն ի՞նչ հիմնավորումներով են ընդունում հաշմանդամության խումբ չսահմանելու մասին որոշումներ և անհասկանալի է պետության նկատմամբ իրենց պարտականությունը կատարելու ընթացքում առողջական խնդիրներ ձեռք բերած անձանց հանդեպ Ծառայության նման մոտեցումը: Մինչդեռ, հանրության վստահության համար հիմնարար նշանակություն ունի, թե ինչպես են պետական մարմինները կիրառում օրենքը: Յուրաքանչյուր ոք պետք է կարողանա իրավաչափ վստահություն ունենալ պետական մարմինների նկատմամբ, որպեսզի իր վարքագիծը կարգավորի լիարժեք գիտելիքներով այն մասին, թե ինչպես են գործելու պետական մարմինները: Ըստ այդմ, պետական մարմինները պետք է հետևողական լինեն իրենց որոշումների կայացման մեջ և չպետք է գործեն կամայականորեն: Յուրաքանչյուր ոք պետք է կարողանա հուսալիորեն ապավինել պետական մարմինների կողմից ընդունված վարչական որոշումներին, որոնց որոշումները և գործողությունները պետք է մշտապես հիմնված լինեն որոշակի իրավիճակը կարգավորող օրենքի վրա, իսկ օրենքը պետք է լինի հստակ ձևակերպված և հեշտությամբ հասանելի հանրության լայն շրջանակի համար, բացի այդ, օրենքը նաև պետք է ճիշտ կիրառվի⁶: Ինչ վերաբերում է մյուս՝ լաված լինելու իրավունքի սկզբունքի պահպանման հարցին, ապա ինչպես արդեն նշել ենք, ԲՄՓ ժամանակ փորձաքննվող անձանց կողմից ներկայացրած փաստարկները հանձնաժողովները հաշվի չեն առնում, չեն գնահատում վարչական վարույթում առկա մյուս փաստերի և ապացույցների հետ,

⁶ Տես «Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7» 2007 թվականի հունիսի 20-ի առաջարկության 6-րդ և 21-րդ հոդվածները, <https://rm.coe.int/administration-and-you-arm/1680a169c6>, էջ 20



ինչը նշանակում է, որ այս սկզբունքը թեև ձևականորեն պահպանվում է, այսինքն՝ անձանց տրվում է արտահայտվելու հնարավորություն, սակայն որևէ արդյունավետություն չունի, քանի որ ԲՄՓ հանձնաժողովների կողմից դրանք չեն քննարկվում: Լաված լինելու իրավունքի սկզբունքի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից տրված մեկնաբանության համաձայն՝ փաստարկներ ներկայացնել ցանկացող անձանց աջակցելու համար հանրային մարմինը պետք է ապահովի փաստերի, փաստարկների և ապացույցների, ինչպես նաև այն իրավական հիմքի լիարժեք բացահայտում, որի հիման վրա նա մտադիր է կայացնել իր որոշումը⁷:

Քննարկվող հարցին իր տարեկան հաղորդումներում մշտապես անդրադառնում է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը: Մասնավորապես, Պաշտպանը հայտնում է, որ «...հաշմանդամության կարգավիճակ սահմանելու նպատակով նշանակված բժշկասոցիալական փորձաքննությունների ընթացքում չի իրականացվում անձի օբյեկտիվ գննություն, հաշվի չեն առնվում անձի կենսագործունեության իրական հնարավորությունները, չի իրականացվում իրական կարիքների գնահատում և փոխարենը որոշումները կայացվում են իրենց համար անհասկանալի, սուբյեկտիվ մոտեցումներով»:»⁸

1.2 Ծառայության կողմից առաջնակի փորձաքննության ընթացքում դրսևորվող խախտումներն ու գոյություն ունեցող խնդիրներն ամբողջությամբ դրսևորվում են նաև Ծառայության կողմից իրականացվող վերափորձաքննության գործընթացում: Այստեղ ևս Ծառայությունը չի ապահովում գործի հանգամանքների լրիվ և օբյեկտիվ քննարկում, չի իրականացնում փորձաքննվող անձի օբյեկտիվ գննություն՝ դարձյալ չցուցաբերելով անհատական մոտեցում: Ինչպես առաջնակի փորձաքննության, այնպես էլ վերափորձաքննության արդյունքներով հաշմանդամության խումբ սահմանելը մերժելու մասին որոշումը որևէ հիմնավորում չի պարունակում հիվանդությամբ կամ վնասվածքով պայմանավորված օրգանիզմի ֆունկցիաների խանգարման, կենսագործունեության որևէ տեսակի, որևէ աստիճանի սահմանափակումների փոփոխության կամ այդպիսիք չլինելու վերաբերյալ: Ըստ էության, վերափորձաքննության արդյունքով հաշմանդամության խումբ չսահմանելու մասին հիմնավորումը, որը ներկայացվում է միայն նշված որոշման դատական վերանայման ժամանակ, այն է, որ անձի առողջական վիճակը բարելավվել է,

⁷ Տես «Մեծ թվով անձանց վրա ազդող վարչական ընթացակարգերի վերաբերյալ թիվ R (87) 16» առաջարկությունը, «Վարչական մարմինների ակտերի առնչությամբ անհատի պաշտպանության մասին (77) 31» բանաձևը, <https://rm.coe.int/administration-and-you-arm/1680a169c6>, էջ 39

⁸ <https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf>, էջ 1323



իսկ հիվանդությունը կամ վնասվածքը հանգեցնում են միայն օրգանիզմի ֆունկցիայի աննշան խանգարման: Նշված դիրքորոշումը հիմնավորող որևէ փաստ, վերաբերելի որևէ ապացույց Ծառայության կողմից չի ներկայացվում ինչպես վարչական վարույթի, այնպես էլ գործի դատաքննության ժամանակ: Այլ կերպ ասած, անձը ներկայանում է վերափորձաքննության առանց առողջական վիճակում դրական փոփոխությունների, սակայն նույն առողջական խնդիրներով, հիվանդությամբ կամ վնասվածքով պայմանավորված մի դեպքում նշանակվում է հաշմանդամության խումբ, մյուս դեպքում՝ ոչ:

Ասվածի մասին են վկայում Վարչական դատարանի կողմից կայացրած վճիռները⁹: Մասնավորապես, բավարարելով հաշմանդամության խումբ սահմանելու մասին հայցվորի պահանջը, գործերից մեկով դատարանն արձանագրել է, որ «...վարչական վարույթի նյութերով և գործում առկա ապացույցներով չի հիմնավորվում, որ հայցվորի առողջական վիճակը բարելավվել է, մասնավորապես՝ պատասխանողի կողմից չի ներկայացվել որևէ հիմնավոր փաստարկ կամ ապացույց առ այն, որ փորձաքննության անցկացման օրվա դրությամբ հայցվորի առողջական վիճակը բարելավվել է և վերացել է վերջինիս հաշմանդամության կարգ սահմանելու անհրաժեշտությունը»¹⁰:

Մեկ այլ գործով Վարչական դատարանը փաստել է, որ «...հայցվորին հաշմանդամ չճանաչելով վարչական մարմիններն անհավասար մոտեցում են ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ՝ հայցվորի առողջական վիճակում էական փոփոխությունների առկայության բացակայության պարագայում, որոշել են վերջինիս հաշմանդամ չճանաչել՝ առանց հիմնավոր պատճառաբանության»¹¹:

Նման վարքածով, ի լրումն առաջնակի փորձաքննության ժամանակ խախտվող վարչարարության հիմնարար սկզբունքների, Ծառայությունը խախտում է նաև Օրենքի 7-րդ հոդվածով ամրագրված վարչարարության հիմնարար մեկ այլ՝ կամայականության արգելքի սկզբունքը: Մասնավորապես, նշված իրավանորմի համաձայն՝

1. Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

⁹ Խոսքը վերաբերում է ինչպես նախկին զինծառայողների, այնպես էլ սոցիալական այլ խմբերի քաղաքացիների գործերով Վարչական դատարանի կողմից կայացված վճիռներին:

¹⁰ Տես թիվ ՎԴ/1475/05/22 վարչական գործը:

¹¹ Տես թիվ ՎԴ6/0072/05/18 վարչական գործը:



Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

2. Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում:

Կամայականության արգելքի սկզբունքն ամրագրված է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Արդյունավետ վարչարարության վերաբերյալ CM/Rec(2007)7» 2007 թվականի հունիսի 20-ի առաջարկությամբ, որի 3-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմինները պետք է համանման իրավիճակներում անհատներին վերաբերվեն նույն կերպ: Տարբերվող ցանկացած վերաբերմունք պետք է օբյեկտիվորեն հիմնավորված լինի: Նշված սկզբունքի համաձայն՝ օրենքի գերակայությամբ ապահովվում է, որ բոլորը՝ անհատները և պետական մարմինները, ենթարկվեն օրենքին, որ առկա լինի իրավական որոշակիություն, և բոլորն իմանան, որ իրենց իրավունքներն ու պարտականությունները սահմանված են օրենքով, որ պետական մարմինները չեն կարող գործել կամայականորեն: Պետական մարմինները չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն խտրական վերաբերմունք դրսևորեն անհատների նկատմամբ¹²:

1.3 Ծառայության կողմից դրսևորվող ոչ պատշաճ վարչարարության օրինակներից է նաև ԲՍՓ ժամանակ նախկին զինծառայողի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի (այսուհետ՝ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով) և այլ ռազմաբժշկական հանձնաժողովների, բժշկական տարբեր հաստատությունների կողմից կազմված այն բժշկական փաստաթղթերի ու դրանցում արտացոլված տվյալների անտեսումը, որոնք անձի նկատմամբ հաշմանդամության խումբ սահմանելու վերաբերյալ բավարար և անհրաժեշտ տվյալներ են պարունակում: Այլ կերպ, նշված փաստաթղթերի ուսումնասիրությունն ինքնին վկայում է, որ անձի նկատմամբ պետք է սահմանվի հաշմանդամության խումբ, քանի որ հիվանդությամբ, վիրավորումով կամ վնասվածքով պայմանավորված առկա են օրգանիզմի ֆունկցիաների կայուն չափավոր արտահայտված խանգարումներ, որոնք արձանագրված են բժշկական փաստաթղթերով:

¹² <https://rm.coe.int/administration-and-you-arm/1680a169c6>, էջ 15



Այսպես, զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու դեպքում Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը զինծառայողին փորձաքննում է ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018 թվականի N 404-Ն որոշման հավելված N 1-ով սահմանված զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկով (այսուհետ՝ Ցանկ) սահմանված համապատասխան հոդվածներով և դրանց կետերով: Ցանկի նշված հոդվածների կետերը, որպես կանոն, դասակարգված են ըստ ֆունկցիաների խանգարման աստիճանների՝ օրինակ.

- ա) կետ՝ ֆունկցիաների խիստ արտահայտված խանգարումներ,
- բ) կետ՝ ֆունկցիաների չափավոր արտահայտված խանգարումներ,
- գ) կետ՝ ֆունկցիաների աննշան արտահայտված խանգարումներ և այլն:

Կազմակերպության կողմից վարվող գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ այն դեպքում, երբ զինծառայողը Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությամբ ճանաչվում է ոչ պիտանի զինվորական ծառայության համար և վաղաժամ գորացրվում զինվորական ծառայությունից, փորձաքննվում է Ցանկի համապատասխան հոդվածի այն կետով, որը սահմանում է հիվանդությամբ կամ վնասվածքով պայմանավորված օրգանիզմի ֆունկցիայի առնվազն չափավոր արտահայտված խանգարումներ: Հատկանշական է, որ նշված զինծառայողների ԲՄՓ-ն իրականացվում է Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության ընդունումից կարճ ժամանակ անց, սակայն, այնուամենայնիվ, Ծառայության կողմից ընդունված որոշմամբ զինծառայողի նկատմամբ հաշմանդամության խումբ չի սահմանվում՝ անտեսելով այն իրողությունը, որ իրավասու ռազմաբժշկական հանձնաժողովը զինծառայողին վաղաժամ գորացրել է զինվորական ծառայությունից՝ հիմք ընդունելով այն փաստը, որ զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության կամ ստացած վնասվածքի հետևանքով առաջացել են օրգանիզմի ֆունկցիաների չափավոր արտահայտված խանգարումներ, որոնք անհամատեղելի են զինվորական ծառայության իրականացման հետ: Հարկ է նշել, որ գործերից մեկով Վարչական դատարանը բավարարել է Ծառայության դեմ ներկայացված հաշմանդամության երրորդ խումբ սահմանելու մասին հայցվորի պահանջը՝ գտնելով, որ օրգանիզմի ֆունկցիայի չափավոր արտահայտված խանգարումը հաստատվում է



ռազմաբժշկական և այլ բժշկական հաստատությունների կողմից տրված բժշկական փաստաթղթերով¹³:

Վերը նշվածը հաշվի առնելով արձանագրում ենք, որ հաշմանդամություն ունեցող նախկին զինճառայողի իրավունքների և ազատությունների վերականգնման միակ արդյունավետ միջոցը մնում է Ծառայության դեմ Վարչական դատարան հայցադիմում ներկայացնելը:

Կազմակերպության գործերի և դրանց վերաբերյալ Վարչական դատարանի կողմից կայացված դատական ակտերի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ գլխավոր խնդիրն այս առումով գործերի քննության ժամկետներն են: Մյուս կարևոր խնդիրը կապված է դատարան դիմելու մատչելիության իրավունքի ապահովման հետ՝ հաշվի առնելով պետական տուրքի վճարման գծով օրենքով նախատեսված արտոնություն չունենալու և պետության կողմից երաշխավորված անվճար իրավաբանական օգնություն ստանալու՝ օրենքով նախատեսված հնարավորության բացակայության հանգամանքները:

Ինչ վերաբերում է Ծառայության վարքածին, ապա Վարչական դատարան ներկայացված և վարույթ ընդունված վարչական բոլոր գործերով Ծառայությունը, որպես կանոն, դատարան է ներկայացնում միայն «Առարկություն» վերնագրով փաստաթղթեր, որոնց համաձայն՝ Ծառայությունը չի ընդունում իր դեմ ներկայացված պահանջը՝ դարձյալ գտնելով, որ հայցվորի մոտ առկա հիվանդությունը կամ վնասվածքը չի հանգեցնում օրգանիզմի ֆունկցիաների չափավոր արտահայտված խանգարման և կենսագործունեության սահմանափակումների, հետևաբար նաև՝ հաշմանդամության, սակայն իր կողմից նշված փաստը հավաստող որևէ վերաբերելի ապացույց Վարչական դատարանին չի ներկայացնում: Մասնավորապես, առարկելով հայցվորների պահանջների դեմ՝ Ծառայությունը մեջբերում է գործի նախապատմությունը, վկայակոչում է հաշմանդամության խումբ սահմանելու հետ կապված նյութական իրավունքի նորմեր, դատավարական իրավունքի նորմեր, Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումներ, այնուհետև եզրահանգում այն մասին, որ հայցվորի պահանջն անհիմն է, որից հետո Վարչական դատարանից խնդրում է մերժել հայցվորի պահանջը: Իհարկե, իր դեմ ներկայացված հայցի շրջանակներում առարկություն կամ հայցադիմումի պատասխան ներկայացնելը Ծառայության իրավունքն է, սակայն դիտարկելով այն քննարկվող խնդրի համատեքստում՝ արձանագրում ենք, որ **ԲՄՓ գործերի դատական**

¹³ Տես թիվ ՎԴ/4091/05/22 վարչական գործը:



վերանայման ժամանակ ևս Ծառայությունը դրսևորում է նույն մերժողական վարքագիծը, ինչ վարչական վարույթի ընթացքում:

1.4 Քննարկվող հարցի համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև Ծառայության ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված հիմնախնդիրներին: Գործող իրավակարգավորումներով ուղղակիորեն չի նախատեսվում նման դեպքերում անձանց պատճառված ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական վնասի հատուցման իրավունք, ինչը պարարտ հող է ստեղծում նախ և առաջ իրավունքների խախտման, իրավունքների խախտման դեպքում՝ պատասխանատվության բացակայության, այնուհետև՝ խախտված իրավունքների ոչ լիարժեք վերականգնման համար: Այստեղ գործում է «Պատասխանատվությունը վարչարարությամբ պատճառված վնասի համար» վերտառությամբ Օրենքի 7-րդ բաժնով սահմանված ընդհանուր կարգավորումը և առկա է օրենսդրական բաց, քանի որ քննարկվող իրավունքի խախտման դեպքում Օրենքը ոչ նյութական վնասի հատուցման իրավունք չի սահմանում: Մասնավորապես, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, Օրենքի «Ոչ գույքային վնասի հատուցման հիմքերը և կարգը» վերնագրով 104-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված են ավելի քիչ իրավունքներ, որոնց խախտման դեպքում անձը ձեռք է բերում ոչ նյութական վնասի հատուցում ստանալու իրավունք: Թեև ՀՀ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «...մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումների հստակեցումը և իրավակարգավորման բացի հաղթահարումը ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման հնարավորությունը պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերում և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու և քաղաքացու բոլոր հիմնական իրավունքների խախտման դեպքերում»¹⁴, այդուհանդերձ փաստում ենք, որ իրավակիրառ պրակտիկայում որևէ փոփոխություն տեղի չի ունեցել, իսկ այն դեպքերում, երբ նյութական և ոչ նյութական վնասի հատուցման պահանջ է ներկայացվում Ծառայությանը, վերջինս դարձյալ առարկում է ներկայացված պահանջի դեմ՝ գտնելով, որ նման պահանջն իրավաչափ չէ: Մինչդեռ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ՀՀ մասնակցությամբ կայացրած մի շարք վճիռներում հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունների արդյունքում անձին պատճառված բարոյական վնասի դիմաց նյութական փոխհատուցում չտրամադրելը գնահատել է որպես Մարդու

¹⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 7 նոյեմբերի 2017 թ. ՍԴՈ-1383 որոշումը:



իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (կից Արձանագրություններով) համապատասխան դրույթների խախտում¹⁵, ինչպես նաև մի շարք վճիռներով սահմանել է փոխհատուցում այնպիսի իրավունքների խախտման համար, որոնք նախատեսված չեն եղել Օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասով¹⁶: Միաժամանակ, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Վարչական ակտերի դատական վերանայման վերաբերյալ» 2004 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ (2004) 20 հանձնարարականի 87-րդ և 89-րդ կետերով սահմանվել են վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության առաջնային նպատակներ՝ ուղղված ինչպես խախտված իրավունքների վերականգնմանը, այնպես էլ՝ իրավունքի խախտման հետևանքով թե նյութական, թե ոչ նյութական վնասի հատուցմանը¹⁷, իսկ «Հանրային պատասխանատվության վերաբերյալ թիվ R (84) 15» առաջարկությամբ սահմանվում է, որ պետական մարմիններն օրենքով պատասխանատվություն են կրում իրենց անօրինական կամ անզգուշությամբ կատարված գործողությունների կամ անգործության, և անհատների կողմից դրա հետևանքով կրած ցանկացած վնասի կամ կորստի համար: Պետական մարմինները պետք է լիարժեք հատուցեն այդպիսի ցանկացած վնաս կամ կորուստ՝ ներառյալ այն վնասներն ու կորուստները, որոնք պատճառվել են պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով, ինչպես նաև, ազգային իրավունքով սահմանված լինելու դեպքում՝ առանց մեղքի պատասխանատվության արդյունքում¹⁸:

2. Վերլուծությամբ բացահայտված հաջորդ համակարգային խնդիրը վերաբերում է ԲՄՓ որոշումների վարչական կարգով բողոքարկման ոչ արդյունավետ և, ըստ էության, հոչակագրային բնույթին: Գործող իրավակարգավորման համաձայն՝ ԲՄՓ որոշումը երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Ծառայության բժշկասոցիալական փորձաքննության և աջակցող միջոցներով ապահովման վարչության վերափորձաքննության բաժին (այսուհետ՝ Ծառայության վերափորձաքննության բաժին), որտեղ իրականացվում է վերափորձաքննություն: Գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վարչական կարգով ներկայացված բոլոր բողոքները մերժվում են՝ ԲՄՓ հանձնաժողովների կայացրած որոշումները թողնելով անփոփոխ, ինչը դարձյալ

¹⁵ Տես Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 23978/06, 27.11.2012 թ.), Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 22999/06, 12.06.2012 թ.) գործերով վճիռները:

¹⁶ Տես Սափեյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 35738/03, 13.01.2009 թ.), Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 35944/03) գործերով վճիռները:

¹⁷ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=117109>

¹⁸ <https://rm.coe.int/administration-and-you-arm/1680a169c6>, էջ 51



հետևանք է այն բանի, որ յուրաքանչյուր գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում վարչական մարմինը չի ապահովում: Մինչդեռ, արտադատական կարգով բողոք ներկայացնելու անձանց տրվող հնարավորությունն ինքնանպատակ չէ, օրենքի գերակայության կարևոր բաղադրատարրերից է և կոչված է նպաստելու անձանց խախտված իրավունքների արագ վերականգնմանը, նախորդում է վարչական ակտերի դատական վերանայմանը, հետևաբար խախտված իրավունքների վերականգնման ավելի արագ, մատչելի և ձևական ավելի քիչ պահանջ ունեցող, ավելի քիչ ծախսատար և արդյունավետ տարբերակ է: Ասվածը կարևոր է դառնում հատկապես այն փաստի գոյության պայմաններում, որ ՀՀ-ում վարչական դատարաններն աշխատում են չափազանց ծանրաբեռնվածության պայմաններում, և հանրահայտ փաստ է, որ վարչական գործերի քննությունը դատարաններում տարիներ է տևում:

Ինչպես ԲՍՓ արդյունքներով կայացվող վարչական ակտի դեպքում, այնպես էլ վերափորձաքննության վերաբերյալ կայացված վարչական ակտը որևէ հիմնավորում չի պարունակում օրգանիզմի ֆունկցիայի խանգարման, կենսագործունեության որևէ տեսակի, որևէ աստիճանի սահմանափակումների փոփոխության կամ այդպիսիք չլինելու վերաբերյալ: Այս մասին են վկայում Ծառայության վերափորձաքննության բաժնի որոշումները և գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով արձանագրված փաստերը¹⁹: Հարկ է նշել, որ ԲՍՓ արդյունքներով կայացվող վարչական ակտի բողոքարկման դեպքում ևս հարուցվում է վարչական վարույթ՝ համաձայն Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի, հետևաբար՝ այն բոլոր պնդումները, վարչարարության հիմնարար սկզբունքներն ու մոտեցումները և դրանց վերաբերյալ միջազգային չափանիշներն ու պահանջները, որոնք արդեն թվարկել ենք վերլուծության նախորդ հատվածում, հավասարապես պարտադիր և վերաբերելի են նաև Ծառայության վերափորձաքննության բաժնի համար այն բոլոր դեպքերում, երբ ԲՍՓ իրականացնող հանձնաժողովների կողմից կայացված որոշումների դեմ ներկայացվում են վարչական բողոքներ: Իհարկե, եթե վերը նշված սկզբունքները պահպանվեին հաշմանդամության սահմանման կամ վերափորձաքննության արդյունքներով կայացվող որոշումների ժամանակ, ապա այդ որոշումների վերանայումը կարող էր կրճատել վերադաս մարմնի կողմից իրականացվող աշխատանքը:

Այնուամենայնիվ, Ծառայության վերափորձաքննության բաժինը, ի թիվս իրավական այլ ակտերի, պարտավոր է ղեկավարվել և գործել առաջին հերթին Սահմանադրությամբ, Օրենքով և անշեղորեն կատարել միջազգային իրավական

¹⁹ Տես օրինակ թիվ ՎԴ2/0246/05/18 վարչական գործը:



փաստաթղթերով պետության կողմից ստանձնած պարտավորությունները: Այս առումով փաստում ենք, որ Ծառայության վերափորձաքննության բաժինը, վերանայելով ԲՄՓ հանձնաժողովների որոշումների իրավաչափությունը, պարտավոր է յուրաքանչյուր գործով մանրամասն ուսումնասիրել բողոքարկվող որոշման իրավաչափությունը, պարզել, թե արդյո՞ք պահպանվել են վարչարարության սկզբունքները և, ըստ այդմ, չէ՞ն սահմանափակվել արդյոք անձի իրավունքներն ու օրինական շահերը: Մինչդեռ իրողությունն այն է, որ Ծառայության վերափորձաքննության բաժինն ապահովում է միայն Օրենքով և ՀՀ կառավարության 2 մարտի 2006 թվականի N 276-Ն որոշմամբ իր վրա դրված պարտականության ձևական կողմը, այն է՝ վերադասության կարգով ներկայացված բողոքի քննարկում և որոշման ընդունում, չպահպանելով ինչպես Օրենքի 37-րդ հոդվածով սահմանված յուրաքանչյուր գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու պահանջը, այնպես էլ վարչարարության հիմնարար սկզբունքները²⁰: Նշվածն իր հերթին բերում է նրան, որ արտադատական կարգով բողոք ներկայացնելու Սահմանադրությամբ, Օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված իրավունքը սկսում է կրել բացառապես ձևական բնույթ և խախտված իրավունքների վերականգնման միակ միջոցը մնում է վարչական ակտերի դատական վերանայումը:

Անդրադառնալով նշված խնդրին՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր 2021 թ. տարեկան հաղորդման մեջ ևս նշում է, որ «...շարունակում է խնդրահարույց մնալ բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների որոշումների բողոքարկման ընթացակարգերի նկատմամբ մարդկանց անվստահության հարցը: Նշվածը խիստ մտահոգիչ է նաև այն պատճառով, որ վարչական ակտերի վերադասության կարգով բողոքարկման մեխանիզմների արդյունավետության հարցում թերահավատությունն առհասարակ վտանգավոր է պետության նկատմամբ վստահության նվազման տեսանկյունից: Սա անթույլատրելի է նրանով, որ այս դեպքում մարդիկ չեն ձգտում իրենց իրավունքների պաշտպանության նպատակով օգտվել նախատեսված երաշխիքներից, ինչն էլ հանգեցնում է ինչպես պետության անգործությանը, այնպես էլ՝ մարդու իրավունքների խախտման դեպքերի չբացահայտմանն ու ամենաթողությանը»:²¹

3. Տեղեկանքում ներկայացվող զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց իրավունքների պաշտպանությանը վերաբերվող հաջորդ խնդիրն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի

²⁰ Տես օրինակ թիվ ՎԴ6/0072/05/18 և թիվ ՎԴ7/1475/05/22 վարչական գործերը:

²¹ <https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf>, էջ 1325



կատարմանն է վերաբերում: Կազմակերպության այն գործերի ուսումնասիրությունը, որոնցով արդեն իսկ առկա են օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր, վկայում են Ծառայության կողմից դրսևորվող հերթական ոչ իրավաչափ վարչարարության, անձանց իրավունքները ոտնահարող և դատարանի վճիռների նկատմամբ արհամարհական վերաբերմունքի մասին, երբ Վարչական դատարանի վճիռները Ծառայության կողմից կատարվում են միայն հարկադիր կարգով՝ կատարողական վարույթի շրջանակներում:

Օրինակ, գործերից մեկով Վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացրել է 2020 թվականի փետրվարի 24-ին՝ պարտավորեցնելով ԲՄՓ հանձնաժողովին ընդունել հաշմանդամության երրորդ խումբ տրամադրելու մասին որոշում: Վճիռը ԲՄՓ հանձնաժողովի կողմից չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ, որից հետո հայցվորը դիմել է հանձնաժողովին՝ որոշումը տրամադրելու պահանջով, սակայն ավելի քան 1 ամիս որևէ պատասխան չի ստացել: Արդյունքում հայցվորը ստիպված է եղել կատարողական թերթ տրամադրելու մասին դիմում ներկայացնել Վարչական դատարան, որի հիման վրա Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցվել է կատարողական վարույթ, իսկ հաշմանդամության երրորդ խումբ սահմանելու մասին որոշումը հայցվորին տրամադրվել է միայն 2020 թվականի սեպտեմբերի 7-ին՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ավելի քան 6 ամիս հետո:

Մեկ այլ գործով հայցադիմումը բավարարելու և հաշմանդամության երրորդ խումբ տրամադրելու մասին Վարչական դատարանի վճիռը Ծառայության կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարան (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան): Վերաքննիչ դատարանը մերժել է Ծառայության վերաքննիչ բողոքը՝ Վարչական դատարանի վճիռը թողնելով անփոփոխ: Որոշումն օրինական ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 25-ին: Այս գործով Ծառայության կողմից հաշմանդամության երրորդ խումբ սահմանելու մասին որոշումը հայցվորին տրամադրվել է կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը Վարչական դատարան ներկայացնելուց հետո՝ 2022 թվականի նոյեմբերի 29-ին, գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ավելի քան 4 ամիս հետո:

Հաշմանդամություն ունեցող անձանց հաշմանդամության խմբի կամ կարգի որոշման հետ կապված ԲՄՓ-ի կողմից հարուցած խնդիրներն իրենց հերթին հանգեցնում են նշված անձանց այլ, այդ թվում՝ առողջական իրավունքների խախտմանը: Մասնավորապես, զրկվելով հաշմանդամության խմբից՝ անձը շատ դեպքերում զրկվում է նաև պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական



օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից, որը ներառում է հիվանդանոցային ու արտահիվանդանոցային, առողջապահական և առողջապահական հարակից ծառայություններից օգտվելու, ինչպես նաև դեղերի կամ համապատասխան անհրաժեշտ բժշկական պարագաների ձեռքբերման սահմանափակումները²²: Ակնհայտ է, որ հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում նվազում է նաև անձի աշխատելու կարողությունը, հետևաբար ի հայտ է գալիս նշված խմբի անձանց զբաղվածության ապահովման խնդիր, իսկ հաշմանդամության զինվորական կենսաթոշակը շատ դեպքերում այդ անձանց եկամտի միակ աղբյուրն է հանդիսանում, մինչդեռ Ծառայության՝ նման ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձի հոգեկան տառապանքները շարունակվում են. հաշմանդամության խումբ չսահմանելու դեպքում նախկին զինծառայողը գրկվում է իր միակ ֆինանսական աղբյուրից, որը բերում է ֆինանսական կայունության խաթարման, անապահովության զգացողության, որոշ դեպքերում նաև՝ ընտանիքի կարիքները հոգալ չկարողանալու, սոցիալական անկայության, սեփական անձի նկատմամբ անվստահության զգացողության: Բացի այդ էլ, տարբեր տեսակի վնասվածքներ կամ վիրավորումներ (օրինակ՝ գլխուղեղի) ստանալուց հետո առողջությունը պահպանելու համար անհրաժեշտ են լինում նաև թանկարժեք դեղամիջոցներ, որոնք պետական պատվերի շրջանակում չեն տրամադրվում և հաշմանդամություն ունեցող անձն իր կենսաթոշակի մի մասը կամ ամբողջը հատկացնում է անհրաժեշտ դեղորայքի ձեռքբերմանը, ինչը վկայում է առողջության իրավունքի պահպանության վերաբերյալ պետության պարտականության չկատարման մասին:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Զինծառայողների իրավունքների մասին» թիվ 4 (2010) հանձնարարականի համաձայն՝ զինծառայողները պետք է իրավունք ունենան լիարժեքորեն օգտվելու առողջապահական ծառայություններից՝ անկախ այն բանից, թե դա կապահովվի ընդհանուր, թե զինված ուժերի համար հատուկ նախատեսված առողջապահական համակարգերի միջոցով: Առողջապահության հասկացության ներքո պետք է հասկանալ հիվանդությունների կանխարգելումը, բուժումն ու խնամքը, ինչպես նաև բժշկական ծառայությունների միջոցով հոգեկան և ֆիզիկական առողջության պահպանումը: Ռազմական գործողությունների ընթացքում զինծառայողների ստացած հավանական վնասվածքների պատշաճ բուժումն ապահովելու համար նրանք պետք է իրավունք ունենան օգտվելու անվճար բժշկական

²² Տե՛ս ՀՀ կառավարության 4 մարտի 2004 թվականի N 318-Ն որոշումը:



օգնությունից և առողջապահական այլ ծառայություններից, այդ թվում՝ նաև ռազմական գործողությունների ավարտից հետո: Բուժման այս ծախսերը նույնպես պետք է ֆինանսավորեն իշխանությունները:

Նկարագրված խնդիրը ևս մեկ ապացույցն է այն բանի, որ Ծառայության և վերջինիս բաժինների կողմից իրականացվող ԲՄՓ-ը, վերափորձաքննության գործընթացը (վարչարարությունը) համակարգային խնդիրները լուծելու նպատակով վերանայման և արմատական փոփոխությունների կարիք ունի: Ընդ որում, հարկ է նշել, որ խոսքը ոչ թե օրենսդրական փոփոխությունների կամ համապատասխան իրավական ակտերում լրացումներ կատարելու, այլ պետության (ի դեմս Ծառայության) վարքագծի մասին է. որքան էլ լիարժեք լինեն ներպետական օրենսդրական կարգավորումները՝ այստեղ հարցն առաջին հերթին պետության պոզիտիվ պարտավորությունների կատարման դաշտում է, ինչը նշանակում է ոչ միայն վավերացնել, ներպետական օրենսդրությամբ սահմանել իրավունքներ ու սոցիալական երաշխիքներ, այլ նաև ապահովել դրանց անխոչընդոտ իրացումը՝ բացառելով անձանց իրավունքների և ազատությունների խախտումները:

4. Վերլուծությամբ բացահայտված համակարգային մյուս խնդիրն արձանագրվել է զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապ սահմանելու գործընթացում: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ ԲՄՓ հանձնաժողովի որոշմամբ անձի նկատմամբ սահմանվել է հաշմանդամության խումբ: Չինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության, ստացած վնասվածքի կամ խեղման և այդ հիմքերով պայմանավորված անձի նկատմամբ հաշմանդամության խումբ սահմանելու դեպքում նշանակվում է հաշմանդամության զինվորական կենսաթոշակ, եթե Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո որոշել է զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապ՝ համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018 թվականի N 405-Ն հավելված N 1-ի 71-րդ հոդվածի 3-րդ կետի: Սակայն, գործող իրավակարգավորման պայմաններում զինվորական ծառայության հետ պատճառական կապը հաստատվում է միայն այն դեպքում, երբ քրեական վարույթի ընթացքում հաստատվում է, որ զինծառայողի ստացած վնասվածքը կամ խեղումը զինծառայողի կողմից կատարված ոչ իրավաչափ գործողությունների հետևանք չէ, ինչը հանգեցնում է գործընթացի երկարատև ձգձգման: Այլ կերպ, անկախ այն հանգամանքից, որ ԲՄՓ իրականացնող հանձնաժողովը նախկին զինծառայողի նկատմամբ սահմանել է հաշմանդամության խումբ, Կենտրոնական ռազմաբժշկական



հանձնաժողովը զինվորական ծառայության հետ պատճառական կապը սահմանում է միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշումը ստանալուց հետո:

Նման մոտեցումն ուղղակի անթույլատրելի է, քանի որ զինվորական կենսաթոշակի այս տեսակը սոցիալական լրացուցիչ պաշտպանության կարևոր երաշխիք է՝ զինվորական ծառայություն անցած և դրա ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձի նկատմամբ պետության ստանձնած պարտավորությունների տեսանկյունից: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ պետության գործողությունները չպետք է սահմանափակվեն միայն նշված խումբ անձանց համար լրացուցիչ սոցիալական երաշխիքներ սահմանող իրավական ակտեր ընդունելով, այլ նաև՝ ի դեմս տարբեր գերատեսչությունների և վերջիններիս կազմում գործող տարբեր պետական մարմինների, պետությունը պետք է գործուն միջոցներ ձեռնարկի անձի իրավունքների ամբողջական, արդյունավետ և անխոչընդոտ իրացումը գործնականում ապահովելու համար: Զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց նկատմամբ պետության վերաբերմունքը չպետք է սահմանափակվի միայն օրենսդրության ընդունմամբ. ինչպես այս, այնպես էլ սոցիալական մյուս երաշխիքները գործնականում լրիվ իրացնելու նպատակով պետությունը պետք է ջանքեր ու միջոցներ ձեռնարկի զինվորական ծառայության հետ պատճառական կապ հաստատելու և հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու գործընթացները սեղմ ժամկետում իրականացնելու, ձգձգումները բացառելու և գործընթացի արդյունավետությունը գործնականում ապահովելու հարցերում, և նշված խնդիրները դիտարկել քրեական վարույթի շրջանակներից դուրս:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նշում է, որ «Մարդու իրավունքների պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ զինծառայողների, ՀՀ սահմանների պաշտպանությանը մասնակցած անձանց ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապը որոշելու գործընթացի ձգձգումների վերաբերյալ»: Ըստ պաշտպանի՝ «պետական մարմինները առաջնորդվում են «մեղավորության կանխավարկածով»՝ դրանով սահմանափակելով զինծառայողի հիվանդության, վնասվածքի, խեղման կապակցությամբ պատճառական կապի տրամադրման



հնարավորությունը, ինչը խոչընդոտում է, օրինակ, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունքի ձեռքբերման գործընթացին»²³:

5. Ինչպես ԲՄՓ պրակտիկայի, այնպես էլ ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առողջական խնդիրների հիմքով զինվորական ծառայությունից վաղաժամ զորացրված և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովումը դիտարկվում է միայն սոցիալական իրավունքի շրջանակում, անտեսելով այն հանգամանքը, որ պետությունը, զինվորական ծառայության զորակոչելով անձանց, ստանձնում է դրական մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ զինծառայողների առողջության իրավունքը պահպանելու հարցում ինչպես զինվորական ծառայության ընթացքում, այնպես էլ զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո: Մասնավորապես, թե օրենսդրության, թե իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ԲՄՓ-ն իրականացնելիս անտեսվում է այն իրողությունը, որ անձը, առողջ վիճակում զորակոչվելով զինվորական ծառայության, գտնվում է պետության պատասխանատվության ներքո և զինվորական պարտականությունները կատարելիս հիվանդություն ձեռք բերած, վիրավորում կամ վնասվածք ստացած անձանց նկատմամբ պետությունը պետք է դրսևորի առանձնահատուկ վերաբերմունք: Մասնավորապես, ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային իրավական պարտավորությունները երաշխավորում են զինվորական պարտականությունների կատարման ընթացքում վիրավորումներ, վնասվածքներ և առողջական խնդիրներ ձեռք բերած զինծառայողներին սոցիալական արտոնությունների տրամադրումը: Այսպես, «Զինված ուժերի անդամների իրավունքների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «ԺԷ» կետը սահմանում է, որ զինծառայողները պետք է ստանան համապատասխան նպաստներ պարտականությունների կատարումից բխող վնասվածքներ ստանալու դեպքում, հատկապես, երբ ստացած վնասվածքը կամ հիվանդությունը թույլ չի տալիս շարունակել ծառայությունը զինված ուժերում և ունի երկարատև բացասական հետևանքներ, օրինակ, անձն այլևս չի կարողանում քայլել, օգտագործել ձեռքերը և այլն: Բացի դրանից՝ պետությունը պետք է ներդնի համապատասխան փոխհատուցման համակարգ: Նույն համաձայնագրի 74-րդ կետը սահմանում է, որ զինված ուժերի շարքերը լքող պրոֆեսիոնալ ծառայողները պետք է ապահովված լինեն փոխհատուցումների

²³ <https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf>, էջ 1004



համապատասխան փաթեթներով և ծրագրերով, որոնք կօգնեն նրան նախապատրաստվել քաղաքացիական կյանքին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ պետությունը պարտավոր է ապահովել, որպեսզի անձը զինվորական ծառայությունն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվությունը հարգելու հետ, իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չեն պատճառում նրան ֆիզիկական տառապանք կամ չեն անցնում զինվորական կարգ ու կանոնի հետ կապված անխուսափելի պրակտիկ պահանջների հետ մեկտեղ նրա առողջությունը և ինքնագրգռությունը համարժեքորեն պաշտպանված են²⁴: Պետության առաջնային պարտավորությունն է անձին զինվորական ծառայության գորակոչելու դեպքում նվազագույնի հասցնել նրա առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլ նաև մարդկային գործոնի պատճառով²⁵:

Մեջբերվածը թույլ է տալիս պնդելու, որ պետությունը զինվորական պարտականությունները կատարելու ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց համար ստանձնում է լրացուցիչ պարտականություններ, մասնավորապես՝ լրացուցիչ սոցիալական երաշխիքների ապահովման վերաբերյալ: Սակայն պետության գործողություններն այստեղ չպետք է ավարտվեն միայն նշված արտոնությունները օրենսդրությամբ սահմանելով: Անհրաժեշտ է, որ պետությունը ձեռնարկի այն բոլոր անհրաժեշտ գործողությունները, որոնք կապահովեն զինվորական ծառայությունից վաղաժամ գորացրված և հաշմանդամություն ձեռք բերած անձանց նշված արտոնությունները գործնականում անխոչընդոտ ապահովելու հնարավորությունը: Ուստի հիմնավոր պնդում է, որ զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած յուրաքանչյուր անձի ԲՄՓ-ն իրականացնելիս պետությունը պետք է ցուցաբերի անհատական մոտեցում: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք վերլուծությամբ արձանագրված փաստական տվյալներից՝ զինվորական ծառայությունից վաղաժամ գորացրված յուրաքանչյուր փորձաքննվող անձի գործով ԲՄՓ հանձնաժողովների կողմից անհատական մոտեցում չի ցուցաբերվում և հաշվի չի առնվում հաշմանդամություն ունեցող անձի հատուկ կարգավիճակը՝ պետության

²⁴ *Stu Kılınc and Others v. Turkey*, no. 40145/98, § 41, 7 հունիսի 2005 թվականի, և *Álvarez Ramón v. Spain* (dec.), no. 51192/99, 3 հուլիսի 2001 թվականի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները:

²⁵ *Stu Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի* (*Chember v. Russia*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռը



պարտավորությունների համատեքստում: Արդյունքում, զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց համար իրավունքներ և սոցիալական երաշխիքներ սահմանող իրավական ակտերը վերածվում են միայն դեկլարատիվ բնույթ ունեցող փաստաթղթերի, իսկ Ծառայության կողմից իրականացվող ոչ պատշաճ վարչարարությունը գործնականում հանգեցնում է մարդու հիմնարար իրավունքների ոչ լիարժեք իրացմանը:

6. Առաջարկություններ.

Ամփոփելով վերլուծությամբ բացահայտված խնդիրները, առաջարկում ենք՝

6.1 զինվորական ծառայությունից վաղաժամ գորացրված յուրաքանչյուր փորձաքննվող անձի գործով որպես պարտադիր նորմ սահմանել համակողմանի և օբյեկտիվ բժշկական գննության իրականացումը, ցուցաբերելով անհատական մոտեցում՝ հաշվի առնելով զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձի հատուկ կարգավիճակը պետության պարտավորությունների համատեքստում,

6.2 զինվորական ծառայությունից վաղաժամ գորացրված յուրաքանչյուր անձի բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնելիս խստորեն երաշխավորել Սահմանադրությամբ, միջազգային իրավական փաստաթղթերով պետության կողմից ստանձնած պարտավորությունները, վարչարարության հիմնարար սկզբունքների պահպանումը,

6.3 բժշկասոցիալական փորձաքննական որոշումների դեմ ներկայացված վարչական բողոքները քննելիս պահպանել վարչարարության հիմնարար սկզբունքներն ու մոտեցումները, դրանց վերաբերյալ միջազգային չափանիշներն ու պահանջները՝ յուրաքանչյուր գործով իրականացնելով գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննարկում,

6.4 զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապ հաստատելու վերաբերյալ եզրակացությունը տրամադրել մեկամսյա ժամկետում՝ գործընթացի իրականացումը դիտարկելով որպես անհետաձգելի գործողություն, բացառելով մարդու արժանապատվությունը նվաստացնող ձգձգումները,

6.5 օրենսդրությամբ նախատեսել պետական տուրքի վճարումից ազատում՝ հաշմանդամության խումբ սահմանելու կամ հաշմանդամության խումբը վերականգնելու



պահանջով դատարան հայցադիմում ներկայացնելու, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու գործերով,

6.6 օրենսդրությամբ նախատեսել պետության կողմից երաշխավորված անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք՝ 6.5 կետում նշված գործերով դատարաններ հայցադիմումներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնող քաղաքացիների համար,

6.7 ՀՀ վարչական դատարանի՝ նախկին զինծառայողի նկատմամբ հաշմանդամության խումբ սահմանելու կամ հաշմանդամության խումբը վերականգնելու վերաբերյալ վճիռները կամովին և օրենքով սահմանված ժամկետում չկատարած պաշտոնատար անձանց նկատմամբ օրենսդրությամբ նախատեսել վարչական պատասխանատվության միջոց,

6.8 օրենսդրությամբ ներդնել նյութական և ոչ նյութական վնասի հատուցման իրավունք բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող մարմինների ոչ պատշաճ վարչարարությամբ պատճառված վնասների հատուցման համար և վարչական պատասխանատվության միջոց՝ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած պաշտոնատար անձանց նկատմամբ,

6.9 զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց տրամադրել որակյալ, անհրաժեշտ և պատշաճ բժշկական անվճար օգնություն նաև զինվորական ծառայության ավարտից հետո՝ անկախ հաշմանդամության խումբ ունենալու հանգամանքից, չսահմանափակվելով գործող օրենսդրական կարգավորումներով,

6.10 պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց համար ապահովել նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնություն և սպասարկում, ներառյալ առողջության պահպանման համար անհրաժեշտ որակյալ և թանկարժեք դեղամիջոցների տրամադրումը:

Վերլուծությունը կատարեց Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի իրավաբան Հայկ Հակոբյանը: